



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 21 » հունիսի 2017 թ.  
ք. Գավառ

N 304-Ա

ԱՐՏԱԿ ՎԱԼԵՐԻԱՅԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետով և 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1797-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կանոնադրության 23-րդ կետի «ե» ենթակետը ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Սևանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետի /ծածկագիր՝ 64-2.3-26/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 20-ի թիվ 5 որոշումը, եզրակացությունը և Արտակ Վալերիայի Վարդանյանի դիմումը՝

Հրամայում եմ՝

1. Արտակ Վալերիայի Վարդանյանին 2017 թվականի հունիսի 21-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Սևանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետի /ծածկագիր՝ 64-2.3-26/ պաշտոնում:

Աշխատավարձը և վարձատրության հետ կապված այլ հարաբերություններ սահմանվում են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունիսի 21-ից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ